25. ԿԻՍՏՈ

Կէղի ու չէղի պառապ մը կէղի, պառպուն յոթ տղա, աղչիկ մը կէղնի։

Ըդ աղչիկ շատ խորոտիկ կէղնի, ամեն մարդ գիկա օր զաղչիկ ուղա, տանի էրկան, պառապ չի տա։

Դև մի կէղնի, ուրեն յոթ ախբեր, ըդ աղչկա խորոտութեն կհասկնա։

Էսքեր կէնա, գիկա յոթ ախբոր վրեն օր քուր տանի։ Աղչկա յոթ ախբեր, ուրանց գեղացիք, մեկ տեխ կէլնեն, էրթան պատերազմի։ Եր օր կէրթան կպատերազմին, էրկու կողմեն լա անհերիք ջարդ կէղնի։ Յոթ տարի ներյարութեն կտիրե ուրանց մեչ։ Ինչքան օր յոթ ախբոր հովրվներ կէրթան մոտենան դևի սինոռին, դև կզարկա էդ հովիվներուն, զոռով օչխրներեր կառնի կէրթա։

Օր մա չէ, էրկուս չէ, ըդ հախ ըդ տղեն կդառնա ուր վեց ախբոր կըսա՝ «Հելեք էրթանք էմ լե կռիվ, յան՝ մինե, յան՝ իտոնցնեա»։

Կէլին կէրթան։ Կզարկին, դևի թալան կառնեն կիգան։ Դև ասքար կէնա, կընկնի ըտրցա էտևեն։ Կզարկին, էրկու-իրեք մարդ կսպանին, ըղթալանի կես կդարցուն, կտանին։

Ախբրտինք մեկել թալանի կես կբերին, կբաժնին գեղացոց վրեն։

Կմնա ըդ մեչ յոթ-ութն օր, դև կէլնի մարդ մի կճամփի, իգա յոթ ախբոր մոտ, բարիշութեն կուզա։ Պզտիկ ախբեր կըսա. «Ես կիշկամ վըր իմ ջանդրկներուն, էն կիշկա վըր ուր ջանդրկներուն, ի՞նչ տեսակով պիտի բարիշութեն ընկնի մըր մեչ»։

Մարդ կտառնա կէրթա։ Կէրթա դևին պատմա, կըսա.— Ըսեց. «Ես Կիշկիմ իմ ջանդըկներուն, էն կիշկի ուր ջանդըկներուն, իմա՞լ պըտի բարիշութեն էնինք»։

Դև կէլնի մեկ լա մարդ կճամփցու, պզտիկ ախրոր կըսա.— Ուր քուր կիտա, թըխ տա, չի տա՝ աշխարք մահ ու մաթ կէնիմ, կէրթամ ուր վրեն, զուր քուր տանիմ, կըսիմ՝ թոխ խատրով իտա։

Պզտիկ ախրերն ա, կըսա.— Տի գա էդա տեխ, մընք կվեճինք։

Մարդ դառնա, կէրթա դևին պատմա, թե.— Տղեն ըդ հըմլա կասա։

Դևն է, կէլնի, գիկա յոթ ախպոր մոտ։

Ճոչ ախպեր կըսա (խոսք ճոչ ախբորն ա).— Ես չըմ իտամ։ Ես կկանեմ նորադար, թե գու կեռցար, զոռով էկար մեր քուր տարար՝ հալալ ու խոշ էղնի քըզի, չէ՝ քու գլուխ կզարկիմ։

Դև կասա.— Աղեկ, իմ գլխուն, իմ էրեսին, ես հմալ ավուր մի կփափակիմ։

Դևն ա՝ օրերուց օր մա գիկա, օր աղչիկ տանի։ Մեծ ախբերն ա գիկա դևի հետ գուլաշ կըպի։ Դև կպառնա ղճոչ ախբեր, կուտա։

Ըն մեկել օր՝ մեկել ախբեր կէրթա, դև ղէն լա կսպանա, էմլա զվեց ախպերն լա կուտա։

Ետին օր պզտիկ ախբոր դոր կէղի։ Կէրթա կանի հ՝ոդի, ուր քուն կընցնա ուր վրեն ու կքնի։ Դև գիկա կառնի զախչիկ, կէրթա։

Լուսմըթին ա, կէլնեն կիշքան, օր զքուր տարած ա, կըսա.—Դադե, իմա՞լ էնինք, օր էրթամ, զիմ քուր պերիմ։

Մամ կըսա.—Լաո, թը մնա էրկու-իրեք ամիս, ես քեզի լավ կգիրցում, լավ կպայիմ, քիչ մը խոռդնաս, ես քըզի կսովըրցում։

Կմնա էրկու-իրեք ամիս, ըտղեն ա, լավ կերցու՝ գինի, միս, ամեն օր տղին կիտա։ Տղեն լավ ուժի տեր կէղնի։

Իրեք ամիս օր կթմի, տղեն կըսա.— Դադե, քու սրտի խորհուրդ ընձի ասա, օր ես էրթամ զիմ քուր պերիմ։

Կըսա.— Լաո, էլի գնա, մըր բաղչեն մըզի ծառ մի կա, թե կեռցար զէն ծառ քոքանց ու ջըլանց քաշեցիր, կեռնաս, էրթաս քու քուր բերիս դևի մոտեն, օր չը կեռցար քաշիր՝ չը կեռնաս էրթաս, քու քուր դևից բերիս։

Տղեն ա, կէրթա զաստված կխանչա, ծեռ կթալա ծառ, ծառ քոքանց ու ջըլանց կհանա։ Տղեն կառնի զծառ, գիկա մամու մոտ։

Մամ կըսա.— Լաո, ըսօր լա մացի, հանգստի, վաղ առավոտուն ըզքի ճամփու կդրիմ։

Տղեն հ՝ն օր կմնա տուն, կհանգստի։ Առավոտուն օր կէղնի, մամ կէլնի գունդ մա մաղ, կոտիկ մի կաթ կիտա տղին, կըսա.— Կէրթաս քու քուրոչ մոտ, հ՝առաճի անգամ քու քուր զքըզի չը ճանչընա, էս ծամթլներ

կցուցուս քու քուրոչ, քու քուր ըզքի կճանչնա։ Եպ օր ճանչնա, քու քուր դքի կտանի ներս։ Եպ օր իրիկուն էղավ, զէդ մազ կթալես կաթի մեչ, կդրիս դևի հ՝առեճ։ Դևն օր կերավ, էդ մազ կփաթվի դևի ճըդըրներ, կմեռնի։

Տղեն կէրթա քուրոչ մոտ։ Կըսա.— Ես քու ախբերն իմ, թո՝ հգամ ի տուն։

Կըսա.— Չէ, դու իմ ախբեր չիս։

Կըսա.— Օր չը հավտաս, իդա քու ծամթըլներ։

Քուր զուր ախպեր կտանի ներս։

Կըսա.— Տղա, արի, ղքի տանիմ պայիմ, դևն օր էկավ, մեկեն տեսավ, ղքի կուտա։

Քուր զախբեր կտանի, պայի քունջ մա։

Դև օր իրկուն գիկա, կըսա.— Ըդ ի՞նչ մարդ մարդախոտ գիկա։

Քուր կըսա.— Մարդ չիկա ըստեխ։

Կըսա.— Չէ, մարդ կա։

Կըսա.— Քինե պայիմ, ասսուց ի՞նչ պայիմ, իմ ախբեր յոթ տարի գացեր խարիբութեն, ըսօր էկեր ա։

— Է,— կըսա դև,— ես տվեցի քըզի խաղըր, գնա, առ արի, ըստեխ խաց թը ուտա, անոթի ա։

Աղչիկն ա, կէրթա կհանա զախբեր, բերա հ՝ոդի, հաց կուտա։

Ըդ հաղ դև տղին կըսա.— Տղա, թե կուզիս էրթաս ծեր տուն, ես քզի փարա լե կուտամ։

Տղեն կըսա.— Վալլա, կէրթամ։

Տղեն կէլնի, կառնի յոթ-ութ օսկի փարա, էլ չիխշնա կաթն ու մազ իտա դևին, կէլնի կառնի զծամթեյն, ուր մաղն ու կոտ, կէրթա ուրանց տուն։

Գիկա, հովիվի մի ռաստ գիկա։

Կըսա.— Դու ի՞նչ մարդու հովիվն իս։

Կըսա.— Ես Հասան փաշի հովիվն իմ։

— Է՜յ,— կըսա,— աշխարք օր իմ ծեն կլսին, ուրանց ճժեր կթորկին օրոցի մեչ ու կփախնեն։

Հովիվ կհարցու.— Հ՝որի՞ն, դու ի՞նչ մարդ իս։

Կըսա.— Ես Կիստոն իմ, զէդա ճուղ օչխար թող հ՝ոդի ու փախի գնա, քու ազին ըսա։

Կըսա.— Հազար քինե էղնեն, ես չըմ թորկիմ իմ ճուղ օչխարս, փախիմ։

Կիստոն ըզթուր կքաշա.— Գնա, ես Կիստոն իմ։ Կիստա, մըստա, ըն մարդու մամու օ... չախլա փստա։ Ես էկեր իմ ծըր ճուղ օչխա՞ր տանելու, ես էկեր իմ ծըր ճժեր սպանելու։

15—915

Հովիվ կթորկա զօչխար, կփախի։ Կէրթա աղին կըսա.— Հ՝ելէք, Կիստոն էկավ, ըղմեր էրեխեք լե կմորթա։

Կըսեն.— Կիստոն ի՞նչ մարդ ա։

Կըսա.— Կիստոն ֆլան դևի աներձագն ա։

— Հ՝ինք մեկի ա՞։

— Չէ, դև լե հ՝ետևից գիկա։

Ըդ աղեն կթորկա զուր թրաշ ու թալան, կփախնի ուր էշիրաթով։

Տղեն կէրթա, զուր մամ կառնի, գիկա էդ աղի քոշկի վրեն։

Ըդ հաղ մամ կըսա.— Տղա, լաո, իգա խըդար հարստութան տեր էղանք, մըր գլուխ ուտա մըր հարստութեն, մըր եսիր օր խըլղի ծեռք մնա, ի՞նչ անուշութուն պտի տեսնանք մըր ջանից։

Տղեն ա, կէլնի կառնի էլմա գունդ մի մաղ, կոտիկ մի կաթ, կէրթա դևի տուն։

Իրկուն օր դև գիկա, տղին կըսա.— Դու էկա՞ր։

Կըսա.— Հա։

Կըսա.— Ձեր հալն ի՞նչ ա։

Կըսա.— Փառք աստու, կապրինք։

Դև կըսա.— Աղչի, հ՝ելի, հաց պեր ուտենք։

Հաց օր կրերա դրա, դև կըսա.— Դե հ՝ելի, ճրագ կպու։

Կըսա.— Վալլա, ճրագ լուս չկա։

Տղեն շուտ զկոտիկ կաթ կդրա դևի հ՝առեճ, գունդ մաղ կթալա հ՝ինք։

Դևն օր կուտա, մաղ կփաթութվի ջիկըրներ, կմեռնի։ Տղեն կէլնի կառնի դևի հարստութեն, զուր քուր ու գիկա ուրանց տուն։

Մամ կէլնի զԿիստոն կարդա։

Մի ժամանակ կմնա, Կիստո տղե մի կէղնի։ Տղեն օր կմեծնա, տանի դնա վարժատուն։

Տղեն կէլնի զուր քուր լե կկարդա։

Կիստո տղեն յոթ տարի կմնա վարժատուն, յոթ լեզու կսովրի։

Ըդ հաղ Կիստոն կըսա.— Տղա, քամին թալեր ա իմ ոտ, դու արի թուջրութեն էրա։

Տղեն ա, կդնա թուջրներու հ՝առեճ։ Մի ժամանակ կմնա, տղեն ամեն բան կսովրի, էրևելի վաճառական մի կէղնին՝ Կիստոն, ուր տղեն։

Ընդոնք խասան ուրանց մուրազին, դու լե հասնեք ձեր մուրազին։